

Ամբաստանապետի  
Սեբաստիանոսի «Փիիկնիկ» Ի  
Ալեքսանդրիա



S. Eurat  
Rédaction «PUNIG»  
Alexandrie

ԵԳԻՊՏՈՍ  
ՏԱՐԻԿԱՆ... 45  
ՎԵՑԱՄՍԵԱՅ 25

ԲԱԺՆԵԳԻՆԸ  
ԿԱՆՆԻԿ Է  
Ձեռագիր եւ չ'դարձուեր

# ՓԻԻԿՆԻԿ

ԱՐՏԱՍԱՏՄԱՆ  
ՏՐ.  
ՏԱՐԻԿԱՆ... 15  
ՎԵՑԱՄՍԵԱՅ 8

ԿՈՎԿԱՍ  
ՏԱՐԻԿԱՆ, ԲՈՂ. 6  
Ազգեր կ'ընդունեն  
ու ին մասնաւոր  
պայմաններով

ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ  
Կը հրատարակուի ԼԵՆԳՐԵՍԻՅԻ, ԿԻՐԱԿԻ առաւօտները

## ԼԵՆԳՐԵՍԻՅԻ ԼՈՒԹԵՐԻՆԸ ԼՈՒԾՈՒԹԵՅԱԻ

(Շար. քիւ ՅԱԷՆ եւ վերջ)

Աղեքսանդրիա Գահիրէն արդէն անխափ է իր բոլոր ազգային վարչական գործառնութեանց մէջ. Ազգ. Պատրիարքարանը տարիներով տեղիս թաղ. Խորհրդին հետ կը շարունակէ իր յարաբերութիւնները. Թագ. Խորհուրդը դեռ մինչեւ հիմայ ու է համար տուած չ'է Գահիրէի Գաւառ. Վարչութեան, Հետեւարար, իրականին մէջ մեր բազաքը կախում չ'է ունեցած Գահիրէն: Կը մնայ պաշտօնական ու վստերական ձեւեր առ այդ իրականութեան:

Անգամ մը դիրքերնիս ճշդուած, Ազգ. Սահմանադրութեան սկզբունքն ընդունուած, դիրքին է այնուհետեւ անոր տրամադրութիւնները քիչ քիչ գործադրել հոս ալ, արգիլել ամեն կամայական ոտնձգութիւններ, վերջ գնել այս անկերպարան, չ'ըսելու համար անիշխանական կացութեան:

Ամեն հոյ պէտք է պիտանայ թէ՛ Սահմանադրութիւնն է որ սանձ կրնայ գնել

ամիրայական բնահանդերներուն. ա՛ն է որ պիտի սահման գնէ ազգ. իշխանութեան, ա՛ն է որ պիտի յարգել տայ ժողովուրդին իրաւունքները. ա՛ն է որ պիտի առոր ճանչցընէ իր պարագը հանդէպ իր գործերը կառավարողներուն: Կառավարող ու կառավարուչ, ժողովական ու ժողովուրդ, Սահմանադրական սկզբունքներուն անխափ և անխափան գործադրութեան պիտի ակընկալեն ամեն բարիք, կարգն ու ներդաշնակութիւնը պիտի վերադառնան, ապուշ ու աննպատակ պառակտումները կամաց կամաց պիտի անհետանան. հասարակութիւնը պիտի խաղաղօրէն զարգանայ, եկեղեցին պիտի ա՛լ ազատուի ոչխարի մորթով գայլերէ. վարժարանները պիտի դառնան ճշմարիտ վառարաններ սերնդին լուսաւորութեանն ու ցեղին գոյութեանը. ամեն հանրօգուտ ձեռնարկներ պիտի յաջողին, օրինաւոր ազգ. իշխանութեան մը նեցուկովը. բարեգործական ու կրթասիրական ընկերութիւնները պիտի կարենան օգտակարապէս յարասեել:

Ու այս ամենը կ'իրագործուի, պայմանով որ Աղեքսանդրիան ունենայ իր կոշու

մին ու զաշտօնին զիտակից ու ձեռնհաս, մանուանդ երիտասարդ ու գործէ չը փախչող Առաջնորդ մը...

Անցած տարի, Թաղական Ժողովի մը ընտրութիւնները զիտակեց թէ ինչ արդիւնք ստիւն և ինչպէս վերջացան. ժողովուրդին համար ո՛չ նուազ հրահանգիչ եղան անոնք, պատմական ընտրութիւնները: Մարդ մը լռի ստքի հարուածով մը վիցոյց ժողովուրդին կառուցած շէնքը, ու անոր բեկորներէն յարմարցուց նոր մը, որ անմիտ կեցցէներով հռչակուած Խնասակալութիւնը պիտի լար, և որ մեր հիմակուան կազմալուծուած Խնամակալութիւնն է:

Խնամակալութիւնը լուծուած է, մզբազ չորվարա սրդիւնաց:

Թող Օրմանեան Պատրիարքը շարունակէ մեր բլթին խնդալ:

Թո՛ղ անխնայութիւնը շարունակէ տակաւին ու մեր ազգային արժանապատուութիւնը մինչև նատիր իջեցընէ. թո՛ղ ժողովուրդն ալ շարունակէ իր եղեճագործ անտարբերութիւնը հանգէպ իր ազգային օրէնքին, պատիւին ու շահերուն. թող մեր զիտակից երիտասարդութիւնը շարունակէ հեղինակ ամեն սրբութիւն:

Բան մը կայ սակայն, որ ա՛լ պիտի չը կրնայ շարունակել. իրերու զրութենէն տառապող հասարակութեան սպասումն է այն:

Քիչ մըն ալ թո՛ղ տեսէ այս ազգային խաղբութիւնը, մօտ է պայթելու ժողովուրդին զսպուած բարկութիւնը:

### Ա Ջ Գ Ա Յ Ի Ն

#### ՋԵՐՈՒՆԻ ԲԱՐԵՍԵՐԱՅԸ

Ինչպէս որ նախորդ թիւով գրած էինք, «Ջեթաւի Բարեսերաց»ին ընդհ. ժողովը պիտի գումարուի ամսոյս 10ի կիրակին: Հրահարեր զրիւեցան բոլոր անդամներուն,

ներկայ գանուիլ այն օրուան նիստին, ուր պիտի վաւերացաի կանոնագիրը:

Այս առթիւ սարտք կը համարինք յիշեցընել Պատ. անդամներուն, որ փութան Մարտի ընկալագիրները վճարել, որպէս զի ձայն ունենան ընդհ. ժողովոյ նիստին մէջ:

Ընկերութեան Առժամ. գործ. ժողովոյն որոշմամբ, հաւարիչ նշանակուած է Տիար Գասպար Ժամակոչեան, որ արդէն ձեռնարկած է գանձել ամսավճարները, ընկալագրի փոխարէն:

—Երուսաղէմի Ս. Յակոբեանց Միաբանութեան մէջ վերջերս ծագած երկպառակութիւնները շատ կը զբաղեցնեն Պոլսահայ մամուլը: Այս վերջին տխուր դէպքերուն վրայ կը սպասենք րտանալ ստոյգ և մանրամասն տեղեկութիւններ, հրատարակելու համար յօտաւոր թիւերուն մէջ:

—Աթէնքի հովիւ Արժ. Տ. Խորէն բահնայ Մուրատեան այս շաբթուան մէջ Գահիրէ մեկնեցաւ, շարունակելու համար սկսուած հանգանակութիւնն ի նպատակ Աթէնքի մէջ եկեղեցոյ մը և վարժարանի մը կառուցման:

—Այվազեան Սրբազան ալ յանկարծ մեկնեցաւ Գահիրէ այս երեքշաբթի:

—Գահիրէի Լսարան—Ընթերցատունը, միակ ժողովրդային հաստատութիւնը Գահիրէն մերազնեաց հասարակութեան, կ'ընդունի Արասահմանի բոլոր թերթերն ու հանդէսները, նաեւ քանի մը տեղական թերթեր, երոսպական լեզուով:

Մեր երիտասարդութիւնը, սրբճարաններու կամ պառներու մէջ փոխանակ թանկագին ժամեր սպաննելու, լաւագոյն ու գնահատելի գործ մ'ըրած պիտի ըլլար, եթէ խմբովին դիմէր Լսարան—Ընթերցատան ընկերութեան ընթերցասրահը, ուր անտարակոյս պիտի գտնէ մտաւարական պաշար և ուր պիտի կազմուի իր խօնջ միտքը, շատ մ'օգտակար ու գեղեցիկ ծանօթութիւններով:

Քաջաշերտնք այսպիսի ազգոգուտ հաս-  
տատութիւնները, սրտնք, ըլլան խեղճուկ ու  
անշուք, մերն են վերջապէս:

«Բրօ Արմէնիա է Մաչէտօնիա» Իտա-  
լական զօմիթէին հովանաւորութեան տակ  
ամսօյս երեքին կիրակի օրը տեղի ունեցած  
է մեծ ցոյց մը Հայաստանի ու Մակեդո-  
նիոյ հարստահարութեան համար: Գօ-  
միթէին նախագահն է Սեղօշօ լրագրին  
նախկին անօրէնը Պ. Է. Մօնէթա: Անդամ-  
ները մեծանուն անձնաւորութիւններ են  
Իտալիոյ ամենակարեւոր կուսակցութեանց,  
ընկերութեանց ու նոյնիսկ պետական ներ-  
կայացուցիչներէն: Ամեն կուսակցութեանց  
պատկանող իտալացի բանախօսներէն գատ,  
(Բրօ Արմէնիա) խմբագրապետը Բիէն Բէյ-  
կար և (Մուլթան Մասէտօնիէն) խմբ-  
ագրապետը Ա. Ռասէֆ, պիտի ատենա-  
բանեն:

## ՔԱՂԱՔԱԿԱՆ

Իտալական քրքրաբերովն սասժ յուրերը

Կ. Պոլիս, 29 ապրիլ. — Քաղաքական  
կացութիւնը միշտ խառնակ է: Հակառակ  
ուսական և ասորիական զիսպաններուն  
ստիպիչ զիմուճեքուն, Մուլթանը դեռ հրա-  
ման չը տուաւ զսպիւր ալբանական ալբա-  
տամբութիւնը: Ընդհակառակն, հրամաններ  
զրկուեցան որ զինուորական գատարաններ  
ստեղծուին Մակեդոնիոյ մէն մի գաւառակի  
մէջ, գատելու և կախել տալու համար զէն  
ի ձեռն բռնուած քրիստոնեայ ապստամբ-  
ները, նոյնպէս, Ազրիանուպոլսոյ նահանգին  
մէջ խիստ միջոցներ ձեռք առնուած են,  
ինչպէս նաեւ Կ. Պոլսոյ շրջակայքը. խու-  
զարկութիւններ կը կատարուին տուններուն

մէջ. բոլոր պուլիար զիւղերը զօրագնդին  
կողմէն պիտի գրաւուին մօտերս:

Քաղաքական շրջանակներու մէջ պար-  
տող զրոյցներուն եթէ հաւատանք, Ռուսիոյ  
ու Մուլթանին միջեւ գաղտնի համաձայ-  
նութիւն մը կայ եղեր, թրքօ-պուլիար պա-  
տերազմի պարագային. Ռուսիան ստանձ-  
նած է եղեր, բնականաբար շատ մ'օգուտ-  
ներու փոխարէն, օգնել Մուլթանին երբոր  
թուրքիան, Ալպանիոյ ու Մակեդոնիոյ մէջ  
գրազած, չը կրնայ ամէն վտանգի դէմ դնէ  
Կ. Պոլիս, Ռումէլի կամ Սե. Շոփուն եւ  
զերքները: Միտ կողմէն, կը կարծուի թէ  
Ասորիան բարեկամօրէն պիտի միջամտէ ե-  
ղեր, ի հարկին, Ալպանիոյ ու Մակեդոնիոյ  
մէջ:

Վիեննա, 29 ապրիլ. — Զօրավար Բօս-  
մարօֆ, համապալական կուսակցութեան  
պետերէն մէկը, վերջերս Ս. Թեթրպուրիի  
զլիսուոր զիւպներէն մէկուն մէջ բանախօ-  
սութիւն մ'ըրած է մակեդոնական հարցին  
վրայ: Բանախօսը յայտարարած է թէ՛ Ա-  
լբատրօ-Հունդարիան, գրաւել կը նայի Մա-  
կեդոնիան և թէ շատոնց՝ Գերմանիոյ ա-  
ջակցութեամբը պատրաստած է իր ծրագիրը  
տարածուելու Վարտարէն անդին մինչեւ Սե-  
լանիկ. Զօրավար Բօմարօֆ առաջարկեր է  
որ Պուլիարիան, Սերպիան, Յունաստանն  
ու Սե. Լեոը հլաւիրուին շարժման մէջ  
դնելու իրենց բանակներն ու արշաւելու  
թուրքիա: Մէն մի տէրութիւն պիտի ունե-  
նայ գործողութեան շրջանակ մը, մեծ տե-  
րութեանց կողմէն գծուած սահմաններով:  
Այս կերպով մակեդոնական հարցը պիտի  
լուծուէր առանց վախնալու որ մեծ տէրու-  
թեանց միջեւ պատերազմը պայթի, ինչ որ  
անգաւանսլիօրէն պիտի տեղի ունենայ, եթէ  
Ասորիան գրաւէ Մակեդոնիան:

— Չեքպիւնայի յաջորդ Պ. Մայիսով գե-  
ոյշ է, հակառակ վերջերս տարածուած  
շուկին, որուն համաձայն Ալբանացիի մը  
յանակի հարուածին զոհ եղած պիտի ըլլար:

— Սելաւնիկի վերջին խառնակութեանց  
միջոցին զերմանական առժամեայ հիւպա-

ուսը թեթեւ մը վերաւորուած է. Կ. Պորոյ  
զեկայանը բողոքեր է Դոան:

Աւսրիակիսն երեք զրահաւորներ ան-  
միջապէս Սելանիկ հասան, այս վերջին շաբ-  
թուան զեպքերուն հեռեւանքով:

— Ահգլիոյ Մեջ նախարարական ու հա-  
կանախարարական մամուլը մղեր է սեպկին  
պայքար մը, ամեն անգլիական մասնակցու-  
թեան զէմ Պաղատի երկաթուղիին շինու-  
թեան մէջ, սր հակառակ Փրանսական զրա-  
մագլուխներու նեցուկին իսկապէս ալման  
զործ մըն է: Պ. Պալֆօր, հանրային կար-  
ծիքին տեղի տալով, անցած հինգշաբթի  
Խորհրդարանին մէջ յայտարարեց թէ՛ կա-  
րավարութիւնը պիտի չը տար իր հաւա-  
նութիւնը ո՛չ թորք կառավարութեան ու  
Փոքր Ասիոյ Երկաթուղեաց ընկերութեանց  
միջեւ եզած գաշնազրութեան, ո՛չ ալ շին-  
ուելիք ամբողջ երկաթուղիները միջազգային  
հսկողութեան ենթարկելու միտող առաջարկ-  
ներուն:

— Սելանիկի մէջ պաշարման վիճակը  
յայտարարուեցաւ, Իսալիան ու Ֆրանսան  
մարտանասեր կը զրկին:

— Մուշրանը ռուսական զեկայան Պ. Զե-  
նովիէվի ապահովութիւն տուաւ թէ Ալբա-  
նացիները զուպելու համար ազդու ե խիստ  
միջոցներ ձեռք առնուած են:

— Գերմանիան կը սն յէ միջանոցի ու  
Սնդիոյ միջեւ բարեկամութիւն մը անկարելի  
է, բայց, եթէ իրազործութի այն, Գերմանիան  
միշտ բարեացակամ աչքով պիտի դիտէ եր-  
կու մեծ ազգերուն մերձեցումն ու համա-  
ձայնութիւնը, որոնք — աւյոպէս կը մտա-  
ծէ գերմանական մամուլը — մեծապէս պի-  
տի օգնեն ընդհանուր խաղաղութեան պահ-  
պանումին:

Լոնտոնի Է. Ի Բարիզ այցելութիւնը  
զեղեցիկ առիթ մ'ի նշաւ ամբաստնաւոր Փը-  
րանսայի ու անգլիոյ միջեւ ատենէ մ'ի վեր  
զոյութիւն ունեցած բարեկամական կապերը,  
թաղաւորին ու նախագահին միջեւ փոխա-

նակուած խօսքերը շատ տպահովիչ կը թուին  
Փրանսական ժողովարարին խանդավառու-  
թեանը չափ ու սահման չը կայ, ողջունելու  
համար բրիտանական Վեհ. հիւրը. համա-  
կրանքն ընդհանուր է:

— Ռուս, Զին ու Ճարտն. Զինու և  
Ճարտնի մէջ անգլիական թղթակիցները  
միշտ կը գրեն թէ Ռուսիոյ Զինու և Ճարտնի  
միջեւ յարաբերութիւնները լարուած են:  
Զինը կը մերժէ եղեր ընդունել Մանչուրիոյ  
խնդրին վրայ Ռուսիոյ միջնեւ իսկ սահմա-  
նախակ պահանջները:

Վերջապէս, ճարտնային ժիժի լրագրին  
Բէքինի թղթակիցը կը գրէ որ Ռուսիան յայ-  
տարարեր է թէ՛ Ճարտնի և միւս տերու-  
թեանց բուն ցոյցերը պիտի մզեն Ռուսիան  
ի վերջոյ իրեն կցելու Մանչուրիոյ երեք  
նահանգները:

— Մարոֆի մեջ. Անիշխանութիւնը կը  
շարունակէ Ռիֆի մէջ, արշաւներ գոյնալ,  
կարաւաններ կողոպտել, են. նոյն իսկ թան-  
ժրի զոներուն քով, Ֆէսի կարաւանները  
չեն կրնար անցնիլ: Թանձրի բաշային  
գնդերը, թալլողներուն զէմ զրկուած, ստիպ-  
ուեցան ետ դառնալ: Դէտուանի մէջ կացու-  
թիւնը կը բարւոյն:

Խմբերուն պեան է Բէսուլի Շերիժ  
անուն մէկը: Արդիայի ամբողջ գաւառակը  
զրաւած է:

— Ֆէրանանտ իշխանի Մէնգոն քա-  
շուիլը շատ մը մեկնութիւններու տեղի կու-  
տայ. կը կարծուի թէ հսն գացած ըլլայ  
քաղաքական պատճառներու համար, թէ և  
հսն են իր մայրը, ութնունը վեց ասրեկան  
Գլէմանդին իշխանուհին ու իր տղաքը:

— ԱՏԵՆ. Մայիս հինգին Բրիտանական  
զօրքերը Մատ Մուլլայի ուժերուն հետ կա-  
տաղի ընդհարում մունեցան, երկու կող-  
մէն մեծ կորուստներ կան:

— Կ. Պոլսէն մայիս վեցին կը հեռա-  
գրեն թէ Սէլանիկի վերջին զեպքերուն վրայ  
Դառը Պալկարիոյ զրկեց խիստ ազդու ծա-

նուցադիր մը, բողոքելով սահմանազուխներուն թոյլ հսկողութեան գեմ:

...Պաշխարիոյ նախարարապետը, պ. Տանէֆ, կարևոր թերթի մը թղթակցին հետ անուակցութեան մը մէջ այսպէս պատասխանեց.

«Կայտութիւնը դուարթ չ'է, ո՛չ մէկու համար. ո՛չ Թուրքերուն, ո՛չ Սերպիան, ո՛չ Յոյներուն, բայց, մասնաւորապէս ահա որ է Վալարիոյ համար. պարտաւ թան է մենէ պահանջել որ արգիլենք հրոսխումքերուն Մակեդոնիա անցնելը. աւելի քան հարիւր հազար մարդ պետք է աւար համար, իսկ Պաշխարիան չ'ունի տասնիկ աժ մը: Ախալ է նոյնպէս կարծել թէ Պաշխարիոյ մէջ կը կազմուին անոնք. մէկիկ մէկիկ կ'անցնին, վասնզատ որ և պահած ճամբաներ: Չեն ընարեր, կածաններէն պատասխանի կ'անցնին անտուններէն մէկ մէկ հողի, ու երբ որ միւս կողմը հանին, կը միանան, կը խմբուին. ի՞նչպէս արգիլենք: Ասոնք մեզ չ'են խաբէր միայն, թուրքերն ալ կը խաբեն. աւելորդ բան է սահմանազուխը պահել, անոնք կ'անցնին միշտ:

«Կ'ըսեն թէ, (կ'ընդմիջէ թղթակիցը.) պաշխարական պահականոցները յաճախ աչք կը գցեն.

«Սո՛ւտ է, սո՛ւտ, (կ'ըսէ Տանէֆ) Աւրասիական թերթերը կը զրպարտին մեզ, մենք անկեղծ ենք. պաշխար կառավարութեան աւելի ո՛չ ոք կը փափաքի հանդարտութիւնը. բայց ունի սալին ու մարձին միջև գրուած է. ամէն մարդ զանի կ'ամբաստանէ:

«Կ'ըսեն թէ ձեռքի տակէ ապոտամքներուն կ'օգնէք ու ձեր բոլոր համակրութիւնները Մակեդոնացիներուն համար, արեւի պէս պայծառ են ու համարձակ, կը համակրինք ո՛չ թէ անոնց ապոտամքութեանը, այլ անոնց գտտին բարութեանը: Այո՛, անոնց գտտը, սուրբ ու արդար, մեր ամբողջ համակրանքը շահած է. ու կը խոր-

հիմ որ Եւրոպան առիկայ մեղի ոճիր մը չի կրնար համարել. Եւրոպան պէտք է աւելի մեղի հետ բաժնէ այդ համակրութիւնները, հարստահարածներուն գասն ա՛յնքան սրտաշարժ է որ ո՛չ մէկուն ներքի է արգիլը ըլլայ անոր յաղթանակին: Եւ արգէն ի՞նչ բանի վրայ է խնդիրը: Պերլինի գահադրին գործադրութեանը վրայ: Երեք ամիսէն քսանը հինգ տարի պիտի ըլլայ որ Եւրոպան իր ստորագրութիւնը գրաւ այդ գահադրին ներքեւ, մեղած սառմնաց ան մինչեւ հիմայ:

Պ. Տանէֆ կը վերջացնէ յայտարարելով թէ՛ Մակեդոնացիները ծայրայեղօրէն յուսահատած են և թէ՛ կարելի չէ ա՛լ զսգել զանոնք բուտերով, այլ իրողութիւններով:

— Սերանիկ ապրիլ երեսունին, ցերեկուան ժամը երեքին, տինամիլի ուռւմք մը սոյննիցաւ Կազի թաղին կամուրջին վրայ, ահռելի դրդիւնով մը: Ասի նշանն էր պաշխար յեղափոխներս շարժումին: Քանի մը վայրկեան յետոյ, շատ մը ուռւմքեր կ'արձակուէին առնէ մը թարքը զօրքերուն վրայ, որոնք կը յարձակէին Պաշխարներուն թաղին վրայ:

Քիչիքս թաղին պաշխարներէն հարիւր հօգիներ որոնք. զէնքով փորձեցին զմազրել, սպաննուեցան:

Իրիկոսան զէմ առաջին ուռւմքերը պայթեցան, փոշոցներուն ու հանրային շէնքերուն մէջ ընդհանուր խաճապ մը տիրեց փախչող փախչողի, հողիներն ազատելու համար. միեւնոյն ատեն, բոլոր յայտներները մարեցան և բազարը թաղուեցաւ խոր մը խորթեան մէջ:

Եւրոպական թաղին մէջ, շորս պաշխարներ, շրջահարը ձեռքերնին, երեք ուռւմք արձակեցին Նիո նիու մեծ սրճարանը:

Իրիկուան ժամը իննին, թնդանօթի հարսած մը լսուեցաւ, յետոյ երկրորդ մը, բերլին գազմէն պարպուած, հրդեհ մ'ազարարելով: Պսմ. Գրամատունը կ'այրէր, բոցերը կը լուսաւորէին ամբողջ երոպական թաղը: Չ'նոսրական կառավարիչը կառքով, հեծեւ պահապաններ կտեսնէ, անմիջապէս հոն գնաց:

Ահամազրա ու Գօլօմայ սրճարաններն առումքեր ն'ատեցան, ինչպէս նաեւ թահի թա գալէ, վարտար, Եւտի գուլէ ու կազ թաղերը:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

ՓԻՒՆԻԿ

ԱՄԵՆՕՐԵԱՅ ԹԵՐԹԻՆ

Որ կսկսի այս տարւան Յալիսէն հրա-  
տարակուիլ Ալեք. անդրիա, նոյն ուղղու-  
թեամբ և հարուստ պարունակութեամբ:

Ամենօրեայ Փիւնիկի խմբագիր-Տնօ-  
րէնն է ՍՄԲԱՏ ԲԻԻՐԱՏ, որուն պի-  
տի աշխատակցին երկու օգնական-խմբա-  
գիրներ ու մէկէ աւելի թղթակիցներ:

ՈՒՂՂՈՒԹԻՒՆ

Ամենօրեայ Փիւնիկը, ըլլալով յոգս-  
վըրդային հրատարակութիւն մը, և նպա-  
տակ ունենալով քաջաշիբիլ յոռաշլիմասեր  
երիտասարդութեան շտրժումները, առ այժմ  
ասանց համար մասնաւոր սիւնակ մը կը յառ-  
կացնէ, ուր պիտի կրնան երեւիլ մանաւանդ  
նորահաս զրոզներու յօդուածներ, հոգ չէ  
թէ ասոնք կոչուած ու պաշտօնով խմբա-  
գիրներ յորովայնէ ղնէրէտայ չ'ըլլան, և կամ  
ուղղագրութեան վէս ալ մեղանշին: Խըմ-  
բագրութիւնը, իրեն վերապահելով ո՛ր և է  
զրութիւն կոկելու իրաւունքը, յօտարակամ  
պիտի հրատարակէ յօդուածներ, թղթակի-  
ցութիւններ, բաւական է որ հանրութեան  
օգտարեւր, ժողովուրդը լուսաւորող դադա-  
փարներ բերեն անոնք:

Ամենօրեայ Փիւնիկը, ըլլալով ան-  
կախ ու միանգամայն ազատական թերթ  
մը, պիտի ջանայ մնալ միեւնոյն բարձրու-  
թեանը վրայ, շարունակելով անաչտօրէն  
քննադատել հանրային գործերն ու խայ-  
տառակիլ զեղծումները, առանց խնայելու  
այս կամ այն կո:սակցութեան, ազգ. [շխա-  
նութեան, ևն.:

ԾՐԱԳԻՐ

1.— Կը պարունակէ ամեն օրուան  
հեռագիրները, քաղաքական, ազգային, տե-  
լական, առեւտրական, ևն. ևն. առատ ու  
թարմ լուրեր:

— 2. Անկախաւ կ'ունենայ առաջնոր-  
դող յօդուած մը, ազգային թէ քաղաքա-  
կան, գրական թէ գիտական նիւթի մը վրայ:

3 ԹԵՐԹՕՆԸ պիտի յատկացուի բա-  
նասիրականին, որուն մէջ պիտի երևին:

Ա.— Չերունակաւի ամբողջ, այն է  
ինը հարիւր տարւամ պատմութեան մեծ  
անցքերը, ցեղախումբերուն հետ լեռնցիկնա-  
րուն ընդհարումները, հերոսական արշաւանք-  
ները, պատերազմները, ևն. ևն., ամբողջը  
վէպի ձեւով:

Բ.— Չերունի սովորութիւնները. բարբերը,  
գաւառարարը, աւանդութիւնները, լեռ-  
նական կեանքը, ևն.

Գ.— Հայի. Հարցին վրայ սիւրբէն մին-  
չեւ մեր օրերը լոյս տեսած թեր ու զէմ  
հրատարակութեանց— բնականաբար դիւա-  
նագէտներու. ընկերաբաններու, ճամբորդ-  
ներու հեղինակութիւններ— նաեւ այս վեր-  
ջին քառօրդ տարու շրջանում, Երուսալի  
զանազան կեդրոնները սարքուած հաւաքոյթ-  
ներու մէջ լսուած բանախօսութեանց թարգ-  
մանութիւնները, կրտսթոնի ճառերէն ըս-  
կըսեալ մինչեւ Տիգրան Երկաթիները:

Դ.— ՏԻԳՐԱՆ ԵՐԿԱԹԻ կենսագրութիւ-  
նը, մեջեւ որ աւարտի: Եզրուպահայք

Ե.— Գիտութեան աշխարհին մէջ երեւցած  
ամեն նորութիւն, գիւտ, բեւեռախոյզ ու  
երկրախոյզ գիտուններուն ծանօթագրու-  
թիւններ ևն.

Ամենօրեայ Փիւնիկին Չորրորդ էլը  
պիտի գրաւեն ծանուցումներ, յայտա-  
բարութիւններ, հայ թէ օտար վաճառա-  
տանց, արհեստաւորներու, շոգեհատային,  
երկաթուղեաց ընկերութեանց ժամանակա-  
ցոյց ու սակագին, պարգեւաւոր վիճակա-  
հանութեանց ցուցակը. սակարանին կրեկ-  
ները, ևն. ևն.:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Բաժանորդագրութիւնը կը սկսի ամեն ամ-  
սոյ սկիզբէն և կէսէն:

Չեղէ կը ծախուի հատը հինգ միլիէմի:

Հասցէն է

Տպարան Փիւնիկ խմբագրութեան ամեն-  
օրեայ թերթի, Աղեքսանդրիա:

Չերունի քարտէսիւրացը, հաստատուած  
Աղեքսանդրիա, 1903 Մարտ 1ին, Ամեն-  
օրեայ Փիւնիկի իրաքանչիւր բաժանոր-  
դէ իրաւունք պիտի ունենայ ստանալ տա-  
րեկան քան դրշ. ուլջ, 5 Քրանգ, 2 ուրբի,  
կամ 1 տօլար, համաձայն խմբագրութեան  
փափագին ու կարգադրութեան:

Հետեւաբար, կարեւոր է այժմէն յայտա-  
բարել թէ՛ Պատ. բաժանորդները, որոնք  
պիտի ուզեն այսօրու ընէ կանխիկ վճարել  
թերթին հոամանան, վեցամանան կամ տա-  
րեկանը, հաճին Բարեւախրացի տարեկան  
բաժինը զատել և զրկել ուղղակի Աղեքսան-  
զրիա Ձեթունի Բարեսիրաց Ընկ. Նախա-  
պահ Գիր. Հայր Բարթողիմէոս Վ. Թա-  
գանանի:

Փոփոխը ձեռքէ կը ծախուի  
հասը ԲՍԱՆ փարայի

**ԱՂԵՔՍԱՆՊԻՍԱ**

- Տիար Բարոնդ Թէլլաւեան, լրագրավաճառ,  
ի Շէրիֆ բաշա:
- » Ռուբէն ծիգմէճեան, փերեզակ, և  
կեղեցիին զիմաց:
- » Յարութիւն Ղազիկեան, նոր Գար  
կաթնարան:

**ՅԱՆՎՐԵ**

Տիար կերակու Չաւրգեան, Լսարան-Ըն-  
թերցարան:

**ՏԻԱՐ ԳԱՍՊԱՐ ԺԱՄԱԿՈՉԵԱՆ**

Ձեթունի Բարեսիրաց Ընկերութեան հա-  
ւարել, պաշտօն ունի նաև գանձումներ ը-  
նելու Փիլնիկի բաժանորդներէն, որոնք հի-  
մակուրնէ կը հաճին վճարել եռամսեայ,  
վեցամսեայ կամ տարեկան բաժնեկիւր  
Ալեկօրեայ Փիլնիկի, որուն բաժանոր-  
դագրութիւնը բացուած է այսօրուրնէ:

Թուականն սկսեալ, երեք ամուսան մէջ,  
այոինքն մինչև Յուլիսի վերջը, կանխիկ  
վճարող բաժանորդներուն համար մասնաւոր  
զիղջ ըրած ենք, հետեւեալ կերպով:

	ՆՌԱՄՄ · ՎԵՑԱՄՄ · ՏԱՐԵԿ ·		
Եփեպոսոս զրշ.	25	50	100
Երուսա Ֆր.	8	16	32
Ամերիկա տօլար	4 50	3 50	7
Կովկաս ոուրլի	3 50	7	14

Չորս ամիսը լրանալէն ետքը բաժանո-ր  
ղագրուողները պարտաւոր են վճարելու հե-  
տեւեալ կերպով:

	ՆՌԱՄՄ · ՎԵՑԱՄՄ · ՏԱՐԵԿ ·		
Եփեպոսոս զրշ.	0	60	120
Արտասահման Ֆր.	10	20	40
Ամերիկա տօլար	2	4	8
Կովկաս ոուրլի	4	8	16

**ՀՐԱԺԵՏ**

Տիրացու Միհրան Ղաչարունեան ըն-  
տանեւք վաղը սեկնելուն առթիւ տե-  
ղիս հասարակութեան իր բարեկամ-  
ներուն հրապարակաւ կը հաղորդէ  
իր հաճեցալի սղջայնները

**ՂԱՂՔՎԱԿՐԻՍ ԵՐԱՅՈՐԶ**

ՎԱՃԱՌԱՎԱՆ ԴԵՐՉԱԿ

Արթուրիկի մկիկթիւն զիմաց Մեծ Միհրանի կանուրը  
կը գործածէ սովորաբար՝ անդիլեական ու ֆրանսական տարւոն  
ու աղիւ կերպաններն, չափաւոր գներով, զոհանքներով մին-  
չև իսկ ամենէն նորածաշաղկ յաճախորդներէ ու յարգելով ի-  
րենց ամենափոքր գիտողութիւնները, կը պարտաստէ, ի պա-  
հանջել հարկին, 24 ժամուան մէջ, ամբողջ գումար մը:  
Հարկը զրուշի առևտուրի փոխարէն յաճախորդը կ'ստանայ  
հարկը հառ վաճառականական գրոջմախղթ, որ հոս կը ծա-  
խուի. զիմեցեք Մեծ Միհրանով կանուրը:

Ճրանոներէնի, տաճկերէնի և տօ-  
մարակալութեան հմուտ երիտասարդ  
մը պատրաստ է պաշտօնավարել վա-  
ճառատան մէջ: Արտասահման ալ  
կ'երթայ զահայուցիչ պայմաններով.  
Գիմել կամբաղբատուներ:

Անգլիերէնի ժամանակը դասեր աւանդողը  
—որուն ծանուցումը ժամանակէ մ'ի վեր կը  
հրատարակուի Փիւնիկի մէջ— կը շարունակէ  
իր գասախօսութիւնները Պոլիճի մէջ թատով.  
հիմայ սենի բաւական թիւով աշակերտներ.  
կո խոստանայ շարաթը չորս անգամ գաս  
աւնողին սովրեցնել հինգ—վեց ամսուան  
մէջ զրել, կարգալ ու խօսիլ,

Մանրամանութեանց ու սլայմաններուն  
համար գիմել Փիւնիկի խմբագրութեան:

**ՊՍԿԵՐԱԶՈՐԴ ՎԱԶԳԷՆ—ԵՐԳԱՐԱՆ**

Մեծ զեղչով սլաի ծախուի վեց հարիւր  
մեծագիր երեսներէ բաղկացած սոյն ընդար-  
ձակ Երգարանը, իր մէջ կը պարունակէ  
բոլոր հին ու նոր հրգերը և տասնի չափ  
նշանաւոր բանաստեղծներու պատկերներ և  
կենսագրականներ: Գինն է, ճամբու ծախ-  
քով միասին, առլար մէկ չէնդ տասնհինգ,  
Երուզայի համար հինգ ֆր. Պարսկաստանի  
համար չորս ֆր.

Տ. Փանոս Եւաբիկեան. Աղեքսանդրիա:

Ռաթիպ փաշա փողոց:

Տ. Գ. Կազանչեան, Գահիրէ. Ալլտին:

**ԶԱՅ ԾՆՈՂՔՆԵՐՈՒՄ**

ԱՐԵՒԵԼԵԱՆ ԳԻՇԵՐՈԹԻԿ ԿՐԹԱՏՈՒՆ

Լոյան, Զուիցերիա

ԵՐԿՐՈՐԴ ՏԱՐԻ

Արեւելեան կամ հայկական կրթատո նը  
կ'ընդունի 10էն 20 տարեկան աշակերտներ,  
որոնց կուտայ, ծնողքներու բաղձանքին հա-  
մեմատ, զիտական, զրական, առեսարական  
կամ արհեստողիտական առողջ ու հիմնաւոր  
կրթութիւն մը, ներդաշնակօրէն միացած  
ազգային հիմնական գաստիարակութեան մը  
հետ: Մեր հայ աշակերտներուն կ'աւան-  
դենք, և այն՝ առաւելց ուր է վճարումի՝  
հայերէն լեզու, հայ. պատմութիւն, հայ.  
մատենագրութեան սլաամութիւն, ևն:

Արեւելեան կրթատան տարեթուակը,  
հակառակ իր ընծայած բազմաթիւ խրակաւ  
առաւելութիւններուն, անմրցելի կերպով չա-  
փաւոր է:

Հայ ծնողներու համար մասնաւոր  
պայմաններ: Ընտանեկան կեանք:

Կրթատան յայտագիրն ամեն ուղղի  
կը զրկուի:

ՏՆՕՐԷՆ Մ. ՆԱԼՊԱՆՏԵԱՆ

Տըքթ. ի Գիտութիւնս

Համալսարանական ժամանակը Ռուսոյիչ



Թէլէֆօն թիւ 33

Նամահատուփ թիւ 398

ԺԱՄԱՑՈՅՑՆԵՐ • ԳՈՀԱՐՆԵՐ • ԱԴԱՄԱՆԻՆԵՐ • ԱԿՆՈՑՆԵՐ •

**L. KRAMER & Co**

Հայրաշրիչ Ն. Խ. Բարձրութեան

ՄՈՒՍԿԻ ՓՈՂՈՑ • ԳԱՀԻՐԷ • ԵԳԻՊՏՈՍ

**ԳՈՐԾԱՏՈՒՄ ԳՈՂԱՐԵՂԻՆԱԳ**

Աղի ֆաւնդիա, Տպարան Փիւնիկ